

ման սաստկութեամբ, զի կտակ Հողեւոր Տիրին հաստատուն պահեսցեն, զի յետ Այ. ՂՏէրդ ունիմք մեր Հայր եւ օգնական եւ Սբ. Էջմիածինն ի քեզ է յանձին, եւ Տէրդ մեր ողջ լիցի ի գլուխն Քրիստոս:

Գրեցաւ ի թուիս Ռժիթ, Օգոստոսի ամսոյ ի Ժ. երորդում աւուրն ի Ստամպուլ քաղաքի, նուաստադոյն ծառայից քոց: Գրիս պատճառքն այսոքիկ Ղայիսէրցի Գրիգոր Վրդպն եւ Ածատուր Վրդպն:

Գ

Որպէս յաւելուած կ'արտատպենք նաեւ վաւերաթուղթ մը, որ մեր ձեռքը հասաւ պատահամբ, եւ որուն դիւանական աղբիւրը նշանակուած չէ:

Նամակ մ'է ուղղուած՝ «Գրանդուկէ իշխանաց իշխանին», Զուղայեցի դեւաջի Գրիգոր վաճառականին մասին, որ կը վախճանի Իզմիրի մէջ, թողով 122 պարտատէրեր, որոնք մեծ վնասի ենթարկուելով «աղիտոգորմ արտասուօք վարանեալ շրջին»: Ատոնք մի քանի ներկայացուցիչ կը դրկեն «Գրանդուկէ»ին, որուն Երկրին մէջ հանգուցեալ Գրիգոր վաճառականն ապրանք ու գործի ընկերներ ունի: Յակոբ Զուղայեցի այս յանձնարարական նամակով կը խնդրէ իշխանէն որ 122 պարտատէրերուն կողմէ դրկուած ներկայացուցիչներուն հանի տալ Գրիգոր վաճառականին ինչքերը, գորս Իզմիր բերելով պարտատէրերուն յանձնեն:

Ո՞վ է այս «Գրանդուկէ»ն: Կը թուի՝ թէ

1680

Օգ. 10